

ԿՈՍՏԱՆԵԱՆՑ Կ. «Տ. ՆԵՐՍԷԱ Ե. ԱՇԽԱՐԱԿԵՑԻ ԿԱՔՈՂԻ-
կոս ամենայն Հայոց. մի հասուած նորա պատմութիւնից».
Ալէքս. 1909.

Վերջին տարիների լեղափոխական շարժումները, որոնք
շատ համակրելի դադարներ են պարունակում իրանց մէջ,
զդպի վնաս տուին զրականութեան և մանաւանդ լուրջ դա-
կանութեան ծաղկման. դադարեց զրեթէ գեղարուեստը, դա-
դարեց հայրենի կեանքի ուսումնասիրութիւնն ու պատմա-
կան զրականութիւնը: Բրօշիւրային զրականութիւնը ողողեց
ամբողջ ասպարէզը, միջազգայնութիւնը, եղբայրական դրօշակի
տակ սկսեց սպառնալ ազգայնութեան այն ժամանակ, երբ
եւրոպական ամեն մի ազգ իր ինքնուրոյնութիւնը և ազգային
առանձնայատկութիւնները պահպանելու համար պատրաստ էր
թնդանօթների հեղեղ տեղալ աշխարհի վրայ:

Եւ այսպիսի մի զրական ամալութեան ժամանակ, եթէ
ասուպի նման մէկ մէկ երևան էին գալիս քիչ շատ լուսատու
գործեր ազգային, զրական, գեղարուեստական և պատմական կեան-
քի վերաբերեալ, մեր հալ ժողովուրդն այնպէս էր ընտելացել
միջազգային բրօշիւրային զրականութեան, որ ծաղրի առարկայ
էր դարձնում այդպիսիներին:

Փառք Արարչին, փոքր առ փոքր սկսել են անցնել այդ
ժամանակները և ժողովուրդն սկսում է նուիրուել կուլտուրա-
կան շինարար գործունէութեան, դիւղացին բռնեց իւր մանր,
արհեստաւորն իր ուրազն ու մուրճը, վաճառականն իր զաղը
և զրազէտն իր զրիչը՝ կռելու, կոփելու հայրենի աշխարհի
աւանդութիւններն ու սովորութիւնները և գալոց սերնդին հա-
ղորդելու իւր երկրի պարծանքները:

Արևը լուսաւորեց աշխարհը և ամեն մի գործող, ինչպէս
մի մի մըշիւն, չերմացած նորա կենսատու ճառագայթներից,
սկսեց իր սովորական աշխատանքը:

Ի՞նչ է ցոյց տալիս մեզ պատմութիւնը. հայոց քաղաքա-
կան կեանքը միշտ աղէտալի է եղել ժողովրդի համար, իսկ
կուլտուրական կեանքը միշտ շինարար, միշտ լսաւորիմական,
որոնց հետքերը այսօր իսկ զարմացնում են նայողին: Ուստի

մենք շատ ուրախ ենք, որ վերջերս մի առանձին շարժում է նկատուում հայերի մէջ՝ հիասթափութիւն թեթեւ քաղաքական կեանքի վերաբերմամբ և ձգտում անդրադառնալու խաղաղ, քաղաքակիրթ գործունէութեան:

Այս նոր, ցանկալի ասպարիդում մենք տեսնում ենք մի քանի լաւագոյն աշխատութիւններ, նուիրուած հայոց և նորա եկեղեցու պատմութեան լուսարանութեան. Ադոնցի նոր աշխատութիւնը, Երուանդ վարդապետի մի երկու երկերը և Կ. Կոստանեանցի մի նոր աշխատութիւն—«Ներսէս Ե. կաթողիկոսը», որ մի հատուած է միայն հեղինակի չորս հատոր մշտարժան եկեղեցական պատմութիւնից:

Հայոց եկեղեցու պատմութիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքի չար ուբարիի պատմութիւնն է. հայ եկեղեցին ինքը հայ ժողովուրդն է. եկեղեցին ժողովրդի մի ամենաուժեղ գործոնն է, և պատմութիւնից ամենատարրական հասկացողութիւն ունեցողն անգամ գիտէ, որ հայ եկեղեցին հայ ժողովրդի համար այն չէ, ինչ որ օրինակ յոյն եկեղեցին յոյնի, կաթողիկ եկեղեցին՝ կաթողիկ Ֆրանսիացու, գերմանացու, իտալացու ևն համար: Վերջիններն այսօր յոյն են, վաղը կաթողիկ, բայց միշտ իրանց ազգութեամբ են որոշուած. նոցա համար կրօնը արդէն կորցրել է իր էական նշանակութիւնը, բայց հայ ազգն ու եկեղեցին ամբողջ 19 դար շարունակ բոլորովին հակառակ պատկերն է ներկայացրել, նա՛ ով որ թողել է հայ կրօնը, որի կենտրոնն է եղել էջմիածինը, դադարել է և հայ լինելուց. և սորա հակառակ, եթէ որեւէ այլազգի հայ կրօն է ընդունել, նա դադարել է իւր ազգին պատկանելուց և այլևս հայ է կոչուել, այնքան զօրեղ է եղել կապը հայ եկեղեցու և հայ ազգութեան մէջ:

Պ. Կ. Կոստանեանցը, իբրև ճշմարիտ պատմադրող և ճշմարիտ հայ լիշեալ գրքին կցուած իւր մի ընդարձակ յառաջարանում շատ գեղեցիկ կերպով է նկարագրում, թէ վերջին հարիւր տարուայ ընթացքում, այդպիսի կարեւոր մի գործօն ինչ աւերակ դրութեան է վերածուել շնորհիւ էջմիածնի վարիչների անսխալութեան և անյաջորդական գործունէութեան,

որի հետեանք է համարում նա Մայր Աթոռի և բոլոր հայ եկեղեցիների անշուք դրութիւնը, երգեցողութեան անխնամ վիճակը, հայ եկեղեցու ուխտի անկեալ վիճակը: Հեղինակը բողոքում է հօտի կրօնական-բարոյական դաստիարակութեան անկման դէմ, ուստի և ստիպողական և հնարաւոր է համարում Մայր Աթոռի բոլոր մասերի ներքին բարեկարգութիւնն ու կազմակերպութիւնը, որի համար միակ գրաւականն է համարում նա՝ քարեկարգ ճեմարանը, զործունեայ տպարանը, կրօնական գիտակցութիւն տարածող Արարատը, մայր եկեղեցու ոգեշունչ պաշտամունքները, տառապեալ ժողովրդին հոգեւոր մխիթարութիւն մատակարարող քարոզիչները, ազգի ոգին ու միտքը լուսատրող և քարծրացնող հոգեւոր գիտութեան մշակները եւ այլ՝ մտաւոր կեանքին զարկ տուող հաստատութիւնները:

Վերջին ցանկութիւններով պ. Կ. Կոստանեանցը կարծէք ի միէ ամփոփել ո՛չ միայն ազգի լաւագոյն անդամների իրձերն ու ցանկութիւնները, այլ, կարծում ենք, նաև բոլոր հայ լաւագոյն—աշակույմեան թէ ձախակողմեան մամուլի վերջերս արտայայտած ցանկութիւնները էջմիածնի արդի կեանքի մէջ և Տ. Տ. Մատթէոս II-ի ձեռքով կատարուելիք բարեփոխութիւնները Մայր Աթոռում:

Այս պայէս:—Հապա տեսէք, որ բոլորովին հակառակն են մտածում օտար գրողները մեր մասին: Ձեզ օրինակ „Тифл. Листокъ“ թերթի յօդուածագիր ռՖН НУНУСЪ-ը (№ 149). Նորա կարծիքով շատ թեթեամիտ հարց է այն՝ թէ կաթողիկոսի անունը ո՞ր ժամանակից պէտք է լիշատակել եկեղեցիներում, օծումից առաջ թէ լետոյ. նա ծաղրում է, որ լիշատակութիւնը լինելու է, ըստ մեր եկեղեցու օրէնքների, օծումից լետոյ միմիայն. դուցէ Նունուսի համար միենոյն է, եթէ նոյն իսկ հայոց կաթողիկոսին հայոց եկեղեցում ամենեւին չլիշատակեն, կամ թէ լիշատակեն ոչ հայոց ազգրնտիր Օձեալին, այլ միորեւէ Մար Շիմօնին կամ եղիդների հոգեւոր պետին:

Նունուսը ծաղրում է Կոստանեանի ցանկութիւնը ալ—լաղաւան հայերի՝ հայաստանեայց եկեղեցու ծոցը դառնալու:

„какъ будто, еслибъ они оставались католиками, перестали бы быть армянами, членами арм. націи“. Ակներև է, որ այս միայն ՆուՆուսի խորին տղիաութեան հետևանք է հայ ժողովրդի անցեալ պատմութեան: Այո՛, պ. ՆուՆուս, „перестали бы“. իրողութիւնն այն է, որ զժրադառար դադարում են հայ լինելուց: Ո՛ւր են Լեհաստանի, Տրանսիլուանիայի, Հունգարիայի մօտ կէս միլիօն հայերը, որոնք կաթողիկոսութիւն ընդունելով „перестали“ հայ լինելուց և այժմ միմիայն նոցա հարուստ գերեզմանատներն են ֆնացել ու աւերակ հայ եկեղեցիները անթիւ հայ արձանագրութիւններով. նոցանից կազմուեցաւ. Արգարովիչների, Թորոսովիչների, Տրդատովիչների և ուրիշ հազարաւոր ... ովիչների լեհական-հունգարական մի ցեղ. ո՛ւր է Հնդկաստանի հարիւր հազարաւոր հայ գաղութի բնակչութիւնը, որոնք 1—2 հարիւր տարի առաջ Հնդկաստանի ժողովրդեան աչքն էին կազմում և հայ աշխարհի յօսն ու ապաւէնը. նոցա աննշան բեկորներն են միայն ֆնացել այժմ, իսկ ֆնացեալները հայաչեալ և հայատիպ անդլիացիներ են անդլիքան եկեղեցուն յարած. ո՛ւր են այն հարիւր հազարաւոր հայերը, որոնք վերջին վեց հարիւր տարուայ ընթացքում պարբերաբար բռնի և կամովին մահմեդական կրօն ընդունեցին և այդպիսով կցուելով թիւրք-աղգութեան՝ այսօր թիւրքից աւելի թիւրք են, մոլեռանդ ու կատաղի, թշնամի հայ աղգութեան և կրօնին, օրինակներ էք ուզում, ձեզ ամենաստուգ տեղեկութիւնները կտայ Օսմանեան հայութեան պատմութեան ու կեանքին քաջ ծանօթ Ազգիս նորընտիր Վեհապետը և նորա պատուաւոր ուղեկից Մինաս Զերադր: Ո՛ւր են այն բազմաթիւ հայերը, որոնք XIX դարու. ընթացքում, կրօնի սահմանափակումների ժամանակ խնամութիւններ և այլ պատճառներով հետգհետէ յունադաւանութիւն ընդունելով՝ միացան ռուս ժողովրդի հետ և այսօր հայի արտաքին տիպի յատկութիւններով միայն կարելի է ճանաչել նոցա ծագումն ու արմատը:

Դանձեալ պէտք են ձեզ փաստեր:

Եւ երբ, քաջ զիտեճալով վերը առաջ բերած ցաւալի իրո-

դուժիւնը, պ. Կոստանեանցը փոանգաւոր է համարում հայու-
թեան համար դաւանափոխութիւնը, պ. Նունուսը հին դար-
ման է քամուն տալիս, ծաղրում է հայ եկեղեցին, ծաղրում է
Էջմիածինը, Մեղուի, Նոր Դարի, Սուքիասի, Նահապետեանի, Կոս-
տանեանի անուններ է տալիս, կղերականութիւն է զտնում ամեն
կողմ, երևի երազի մէջ էլ սօցիալիստութիւն տեսնելով,
Մակարի օրերն է ծաղրում, խաւարամիտներ է տեսնում իւր
շուրջը:

Եւ երբ հեղինակը պահանջում է Էջմիածնի Աթոռից բա-
րեղարդութիւն, միաբնութեան անձնուրացութիւն և վերջա-
պէս որ Էջմիածինը կենարօնիկնի հայութեան քաղաքակրթական
զարգացման և լուսաւորութեան. . . պ. Նունուսը զոչում է
назадъ къ предкамъ, къ мракобѣсію. . .

Այո՛, պ. Նունուս, հայատեցութեան և Էջմիածնակերութեան
փառքը Գալիցիին և Կանչելիի հետ ամբողջովին Ձեզ փէշքաշ,
կեղծ սօցիալիստութեան դափնիներէ հետ:

ԳԻՏ Ա. Բ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԹԵՐ

Կոստանեանց Կ. Տ. Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոս
ամենայն հայոց. մի հատուած նորա պատմութիւնից, Ալէքսան-
դրապօլ. 1909. դ. 30 կ.

Ա. Աբէղեան. Աշխարհազրութեան դասագիրք. ա. մ. Կր-
կորդ ճոխացրած տպ. 107 նկարով. Թիֆլիս 1909 դ. 50 կ.

Շտաուդէ. հին ուխտի նիւթի ժշակութիւնը 2 մ. գերմ.
Թարգմ. Սահակ աք. Սահակեանց. Թիֆլիս. 1909. դ. 1 ո. 65 կ.

Ա. Աբէլեան. Խելագար Մինաս. Թիֆլ. 1909 դ. 20 կ.

Зензиновъ М. Чай и пошлина. Москва 1909 г. 5 к.

Տնայնագործական Համագումար. Թիֆլիս 1909 դ. 70 կ.

Gurgen Ediljan. Kritik der Zillér. schen Formalstufentheorie.

Հայ Գրողներ Ա. Կազմեցին Ղ, Աղայեան, Ա. Ահարոնեան,

Յով. Թումանեան, Վ. Փափազեան. Թիֆլիս 1909 դ. 2 ո.

М. Алавердянцъ. Пребывание Имп. Ник. I въ Эчм. и въ
Тифл. С. П. Б. 1909.

Յ. Կոստանեան. Նոր Իսրայէլի Սաղմոսներ. Բագու 1909.